

ԵՐԵՎԱՆԵՐ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՏՈՒՆԵՐ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրության մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Ուղարկողները բաց է առաւօտան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ամեն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւանդակ բողոքաւորին 10 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Պաշտպանութիւն գտան. — Երբեք, ՏԵՍՈՒՆ-
թիւն, Նաուշներ վաւառակար, սովորութիւններ
բից, Նամակ Կարսից, Նամակ Զանգեզուրի
գաւառից, Նամակ Նախապետութեան, Ներքին
ընտրութիւն. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒՆԻՆ, Նամակ Գեր-
մանիայից, Արտաքին լուրեր. — ՀԵՌԱՅԻՆԻՆԻՆ.
— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ԳՏԱՆ

Հրատարակվելը նոր օրէնք, որով պաշտ-
պանութիւն պէտք է գտնեն այսուհետեւ
այն մանուկները, որոնք ծնվում են անվա-
ւեր ծանաչված ամուսնութիւններից, կամ
այնպիսի կենսական թիւներից, որոնք ա-
մուսնական յարկից դուրս են գտնվում:

Այսպիսի եկող նոր մարդը անմիջ է և
է կարող կրել իր ծնողների գանցաւու-
թեան պատիժը, նա պէտք է պաշտպա-
նութիւն գտնէր օրէնքի կողմից և գտաւ
վերջապէս: Անվաւեր ամուսնութիւնից
ծնված երեխաները պէտք է ունենան նոր
օրէնքով օրինական երեխաների իրաւունք-
ները: Ծնողները պարտաւոր են նրանց
պահել — խնամել և իրանցից է կտրված,
թէ ինչպէս կը բաժանեն երեխաներին մի-
մեանց մէջ: Եթէ է փոխադարձ համաձայ-
նութիւն չը կայացաւ ծնողների մէջ երե-
խաների վերաբերութեամբ, այն ժամա-
նակ խնամակալական հաստատութիւններն
են լուծում այդ հարցը: Երեխաների վրա
ծնողական իրաւունքը պահպանում է նա,
ով նրանց խնամում է և միայն դրա մա-
հից յետոյ միւս ծնողը կարող է հանդէս
բերել իր ծնողական իրաւունքները:

Ամուսնութիւնից դուրս ծնվող երեխա-
ներ օրէնքով համարվում են նրանք, որոնք
ծնվել են դուրս չամուսնացած կանանցից
կամ այնպիսի այրիներից, որոնց ամուսնի-
ւորի մահից յետոյ անցել է 306 օր: Այդ-
պիսի երեխաները կոչվում են կամ կնքա-
հօր, կամ իրանց մօր ազգանունով: Հայրը
պարտաւոր է օրէնքով ապահովել երե-
խաներին մինչև նրանց չափահաս դառնա-
լը կամ պաշտօն ստանալը: Ծնողների ցան-
կութեամբ այդ երեխաները կարող են
օրինականանալ, իբրեւ նրանց գաւառների
Ամուսնացած մարդիկ, եթէ թող տուին
իրանց կենսական թիւն մի կնիք հետ, որը
ը գրեւոր տղամարդու պատկաճ լինելը,
պարտաւոր են իրանց վրա վերցնել որոշ
վարձատրութիւն:

Այսպէս է օրէնքը իր ներկայ խմբագ-
րութեամբ: Նա նպատակ ունի մի կողմից
պաշտպանել մանուկին և նրան ապահովել
մինչև չափահաս դառնալը, միւս կողմից
զգուշ այն տղամարդուն, որը խաբէու-
թեամբ կամ թեթեւամտութեամբ կենսա-
կան թիւն է հաստատում կանանց հետ,
առանց մտածելու պատասխանատւութեան
մասին և ծաղրի ենթարկելով խելք զոհի
ամուսնուհիները, երբ նա, իբրեւ մայր, պար-
տաւոր է հոգալ իր գաւառի մասին:

Ինչպէս երեխան իրաւունքներ ունի դե-
պի հասարակութիւնը, դէպի այն ծնող-
ները, որոնք նրան կենք են տուել: Երե-
խայի իրաւունքները ստիպում են, որ
ծնողները գերի մէջ մանուկներ իշխեն ի-
րանց պարտաւորութիւնների մասին: Եթէ
նրանք անընդունակ են երեխաների խնա-
մատարութիւնը և ապահովութիւնը ի-
րանց վրա վերցնելու, այն ժամանակ թող
զգուշանան անզգուշ քայլերից: Օրէնքը
պէտք է լինեցնէ պատասխանատւութեան
մասին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒՆՈՒԹԻՒՆ

ՆՄՈՒՇՆԵՐ ՎՆԱՍԱԿԱՐ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵ-
ՐԻՑ
(Գամակ գաւառից)

Կան սովորութիւններ, որոնք եկեղեցական
սրբազան արարողութեան, կրօնական մի ծէսի
նման՝ անցնում են յաջորդաբար սերունդից սե-
րունդ: Մենք էլ կուրօրէն հետամուտ ենք նը-
րանց, կարծելով, որ ուրիշ կերպ չի էլ կարող
լինել: Բայց եթէ մի րօպէ մտածելու լինենք,
կը տեսնենք, որ այս սրբազան սովորութիւն-
ներից շատ շատերը ոչ միայն անհիշեթ, ան-
խորհուրդ են, այլ և վնասակար ու թերեւս
զարմանալի, թէ ինչպէս թոյլ ենք տալիս մեզ
այս անմիտ սովորութիւններին հնազանդ հե-
տեւելու և մեզ համար պարտաւոր կացուցա-
նելու:

Վերջինքս դրանցից ամենահայտնի, ան-
մեղք — ձեռք տալու սովորութիւնը: Անմեղ ա-
սացինք և որքան հաճելի, երբ երկու բարե-
կամներ, հանգիւսելով միմեանց, ջերմ օրտով
սեղմում են իրար ձեռք: Այդ բայց փոխադար-
ձաբար ձեռք են մեկնում իրար ոչ միայն բա-
րեկամները, այլ և երկու ընտրիմ թշնամիներ:
Ձեռք են մեկնում իրար առանց հասակի, սեռի,
գիւրդի, կրօնի և զգացմունքի խտրութեան...
Սեղմում է ձեռքը մի մարդ, որ իր ամբողջ
գոյութեամբ դէմ է քեզ: Ձեռք է մեկնում քեզ
մի մարդ, որ ոչ միայն ձեռքերից, այլ և ամբողջ
մարմնից նողկանք կը զգուս: Անցնում են փո-
ղոցով, շտապում են գործի, րօպէս թանգ է
քեզ համար, յանկարծ կանգնեցնում է քեզ մի
չափ հեռու ծանօթ և ձեռք տալիս, դրա հետ
միասին, ի հարկէ, հաց ու փորձ, քէֆ, ահ-
վար... Ձիով են գնում. բերանով և գլխարկով
բարեւածը բաւական չէ, պէտք է ձեռք տալ,
գնում են հարսանիք, կնոնք կամ մի հիւրընթի-
ւաւառ է, չորս քու պարտաւոր են սեղմել
մի քանի տանանակ քրտնած ձեռքեր և ապա
սեղանի նստել և անոյշ խորտիկներ անուշ
անել: Այդ րօպէին ու զարդին է կարմրել, որ
քեզ ջուր տայ, դու ձեռքը լուսանաւ Հին ժա-
մանակներում գոնէ սովորութիւն կար, ուսե-
լուց առաջ՝ հիւրերին ջուր մատուցանել՝ ձեռ-
քեր լուսնալու համար: Հրապարակում են, քեզ
մօտենում է մի թղթախաւար և, հակառակ
քո ցանկութեան, սեղմում է քո աջը իր ա-
մուկ ձեռքով: Ծանօթը լաւ գիտէ, որ ինքը
սփիւրթիկ է, ունի կաշուի մի օր և է վա-
րակիչ հիւանդութիւն, բայց այդ չէ խաբա-
րում նրան՝ մօտենալ քեզ և ձեռքը սեղմել:
Արի և այդ ձեռքով բերանը սրբել, կամ մի
ուրիշ անմեղ մարդու ձեռք տուլ: Ստատանա-
տանի, մարդու խղճի էլ դէմ է Շատ անգամ
էլ պատահում է, որ դու ձեռք ես տալիս քո
մի ծանօթին, որ ինքը շատ մաքրաւէր մարդ է,
բայց հէնց նոր է գուրս եկել սկաւրաթնայով,
բժաւոր սփիւրթ կամ մի ուրիշ սուր հիւանդու-
թեամբ վարակված մօտից, ինքն էլ իսկի չը
գիտէ այդ բանը կամ հէնց նոր այդպիսի մէկի
ձեռքն է սեղմել: Հետեւանք հասկանալի է...
Տեսնում ես՝ մի խիստ լաւ, խոնդ օրիորդի
ձեռքը սեղմում է, գրեթէ բռնութեամբ, բռն-
թու մէջ քիթ ու պոչնոց կորած մի փնթի
մարդ: Եւ նազելի օրիորդի բերանից, այս իսկ
պատճառով, օրեք շարունակ կերակուրը կուլ չէ
գնում: Առանց հանաքի՝ չէ պատահել ձեզ տես-
նել, որ ներմային մի տիկին քիչ է մնում իս-
տրեթիկայի մէջ ընկնի՝ չորացած, ոսկրոտ կամ
չափազանց սառն ձեռքի սեղմումից...

Այսպիսով մենք տեսնում ենք, որ ձեռք
սեղմելու սովորութիւնը դէմ է թէ առողջա-
պահական և թէ էթիկայի, քաղաքական կան-
ոններին: Դժբաղդութիւնն այն է, որ դեռ
անքաղաքականութիւն է համարվում՝ ձեռնո-
ցով ձեռք բռնելը, պէտք է անպատճառ հանել,
պղծաբար յիմարութիւն...
Պէտք է ասել, որ մեզանում առհասարակ
ձեռք տալը համարվում է մի առանձին քաղա-
քականութիւն, քաղաքականութիւն: Ձեռք

տալ չը սիրողը «ուխտան» է, հպարտ: Այս
պատճառով էլ շատ փոքր հասակից երեխանե-
րին սովորեցնում են ձեռք տալը: Մենք շատ
անգամ ենք ստիպված եղել այս սովորութիւն
խաների չափով կտրելով: Բայց խելք երեխան
ինչպէս է մեղաւոր, նրան այդպէս են սովորեց-
րել: Այդ դեռ բաւական չէ, խելք ծնողը
պատշաճութեամբ է իր օրդուն՝ համարել իրանց
մեծի ձեռքը, որպէս նախ խոնարհութեան, հե-
զուլթեան: Որքան զգուշ է սակայն տեսնել,
թէ ինչպէս շատ անգամ անմեղ, մաքուր մի
մանուկ համարում է մեղաւոր, հիւանդոտ
մարդու հիւանդ ձեռքը:

Ձեռք սեղմելու սովորութեան դէմ վաղուց
են դիմել Ամերիկայում: Գոյութիւն ունեն
նոյն իսկ ընկերութիւններ, որոնց նպատակն է
վերացնել ողորմելու այս վնասակար եղանակը:
Ամերիկայի օրինակին հետեւում է և Պետեր-
բուրգը:

Հապա ինչպէս բարեկեց, կը հարցնեն շա-
տերը: Ինչ օգուտ և ինչ անհրաժեշտութիւն
կայ ձեռք սեղմելու դրա համար, կասենք մենք,
և մի թէ բոլոր ազգերը ձեռք են տալիս իրար
հանգիւսելիս: Այդ կողմից, օրինակ, աւելի լաւ
չէ թուրքերի ողորմելու: Արդեօք չէ կարելի ձեռ-
քի շարժումով, կամ օգային համարյով փոխա-
րինել դրան իսկ եթէ այդ էլ չը լինի՝ իստ աշ-
խարհը չի քանդվի:

Ձեռք սեղմելու սովորութիւնը բարեկեց
ձեռքերի մէջ երկրորդն է իր վնասակարութեամբ:
առաջին տեղը պէտք է տալ համարելու ան-
ճշման սովորութեան...

Երեւակայեցէք մի այսպիսի դրութիւն. ձեռք
ներկայութեամբ համարում է ձեռք եղբորը,
քրոջը, ամուսնուն կամ մօրը մի մարդ, որի սի-
ֆիլիտիկ լինելը ձեզ լաւ յարմար է. անտանկի
կացութիւնն չէ մի թէ... Բարեբաղդաբար, դեռ
ենս արմատներ չէ բռնել մեզանում այս նոր
մօղան. հարկաւոր է սաղմի մէջ խելքել նրան
ինչպէս և ձեռք բռնողները, համարվողներն
էլ քիչ խորութիւն են դնում հասակի, սեռի
և զգացմունքի մէջ... Յուզան համարելով
մատենից Երեսուսին Գրիգորիանական սիրոյ, եղ-
բայրութեան այս վսեմ գործը վաղուց է կորց-
րել իր նշանակութիւնը... Ով չէ ուզում սի-
ֆիլիտով վարակվելու իրեն ունենալ, նա ալ
ու ձախ չը պիտի համարյոյնք սիւսէ... Ան-
ցան այն երկանիկ ժամանակները: Չը կայ այլ
ևս նշանակութեան պարզ, մաքուր կենսաբ-
շնորհի բազուի և այլ լուսաւորեալ քաղաք-
ների, մենք էլ գուր չը մնացնենք նրանց առա-
քալների առանձնաշնորհաւորութիւնը...

Տանակերտքի

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Թուլիսի Թ-ին

Թիւրքաց տիրապետութեան ժամանակ Կար-
սուս, որ երբեմն եղել է հայոց թագաւորանիստ
քաղաք և ամուր բերդ, կային մօտաւորապէս
300 տուն հայեր, որոնք իրանց կրօնական
պէտքերն հոգալու համար ունէին «Ժամանա-
մաշիկ» կոչված թաղում, միջնաբերդի ուղիղ
տակը, մի հասարակ գիւղական եկեղեցի, նրա
բակում մի դպրոց և առաջնորդարան: Վեր-
ջին ուսուցիչը քաղաքացիական պատերազմից
կորել Կարսը իր ամբողջ նահանգով անցաւ ուս-
այ ձեռքը, ամեն կողմից հայերը դիմեցին
այդ նորանուաճ երկրը բաղդ որոնելու, մա-
նաւանդ Ալեքսանդրօպօլի բնակիչներից, իբրեւ
աւելի մօտ գտնվող և յարմարութիւն ունե-
ցողներ: Հայերի թիւը հետզհետէ սկսեց աճել,
նրանք ալ ևս քաւարութիւն չէին կարող
ստանալ վերեւ ինչած անչաք և անյարմար
եկեղեցիով, ուստի խնդրեցին այն ժամանակ-
վայ յաջորդ Աղուստանեան եպիսկոպոսին, «Բեր-
դամէշ» կոչված թաղում գտնված մատուռն օ-
ծել տուին Սուրբ Նշան անունով և այդ թա-
ղեցիք, մանաւանդ «Երաբամ-փաշեցի» երկրա-
գործները, յաճախում էին այնտեղ:

Այս էլ չը կարողացաւ բաւարարութիւն տալ
օր իրաւ անոց և ճոխացող հայ հասարա-

կութեան, որովհետեւ երկու եկեղեցիները
միասին մի կանոնաւորը չարժէին, չափազանց
անշուք, անյարմար և փոքր էին. նրանցից
մանաւանդ ս. Աստուածածին աւագ եկեղեցին
գտնվում է այնպիսի դիրքի վրա, որ ահագին
դժուարութիւններով հազրի կարելի է բարձ-
րանալ, մանաւանդ ձմեռը, երբ առանց այն էլ
անկանոն ճանապարհը ծածկված է լինում սա-
ռուցով: Բացի սրանից, նա գտնվում է Միջնա-
բերդի այն ժայռերի տակ, որոնք երբեմնապէս
վայր են գործվում դէպի անբը և ահագին
վնասներ տալիս թէ շինութիւններին և թէ
նրանց բնակիչներին կենսաբան 1887 թւին էր
կարծեմ, որ այսպիսի մի դժբաղդ դէպքի զոհ
գնաց եկեղեցու մօտ ապրող մի ամբողջ ըն-
տանիք:

Այս և ուրիշ հանգամանքներ Կարսի հասա-
րակութեան մէջ միւսը ծագեցրին աւելի յար-
մար տեղում մի վայելուչ եկեղեցի կառուցա-
նել, իրանց ունեցածները փոխարէն Այդ միտ-
քը որոշ ձեւակաւնութիւն ստացաւ 1887 թւին,
երբ Երեսուսի թեմակալ Սուրբառ եպիսկոպոսը
այցելելով իր հօտը եկաւ Կարս: Նա հասարա-
կական ժողով կազմեց, ընտրվեցին մասնաժո-
ղովի անդամներ, որ Աղուստանեան եպիսկոպոսի
հետ միասին շինութեան գործը գլուխ բերեն:
Այս մասնաժողովը եկեղեցու տեղ ընտրեց քա-
ղաքի համարեա կենտրոնում, որի մի մասը
քաղաքը գիւցեց հայ հասարակութեանը ճիւղա-
պէս՝ եկեղեցի շինելու համար, իսկ այդ հողին
կից մասնաւոր անձանց տները գնվեցին մի
քանի հազար րուբլով: Այս տեղի վրա կառուց-
վելիք եկեղեցու մակարդակի կազմելը յանձնվեց
քաղաքային ճարտարապետ պ. Սալադի-Պետ-
րիչէվին, որն իր վարձատրութիւնը լիովին ըս-
տանալուց յետոյ՝ բաւական ձգձգեց յանձն ա-
ռած պարտականութիւնը և վերջը դարձեալ
թերի թողեց, որի լրացնելը յանձնվեց երկրա-
չափ պ. Լազիկեանի և առանձին վարձատրու-
թեամբ: Եկեղեցու մակարդակը հաստատվեց
պատշաճաւոր իշխանութեան կողմից և թոյ-
լատվեց շինութիւնը կատարել, եթէ որոշված
տեղը ոռւտաց եկեղեցու մօտ չէ: Բաւական
ժամանակ այս գրութեան մէջ գործը ձգձգվե-
լուց յետոյ, Կարսի նահանգապետ գեներալ Տո-
միչ ձեռնհաս անձինքներից մի մասնաժողով
կազմեց՝ տեղի մասին կարծիք յայտնելու հա-
մար. մասնաժողովը եկաւ այն եղանակով
թեման, որ ուղղափառական տեսակէտից ան-
յարմար ևս մինչև իսկ վնասակար է որոշված
տեղում հայոց եկեղեցի կառուցանել: Հոգեւոր
կառավարութեան խնդրելով, նահապետ վար-
դապետի յաջորդութեան ժամանակ, նշանակվեց
մի երկրորդ մասնաժողով նոյն նպատակի հա-
մար, որը կրկին հաստատեց նախկին մասնա-
ժողովի կարծիքը: Եկեղեցու համար հայերին
առաջարկվեց տեղ գնել և կառուցանել «Կա-
րապետեան» փողոցից դէպի արեւելք, ուր
յարմար կը համարեն իրանք. իսկ նախկին
նուիրած գետինը կամ վերադարձնել քաղաքին,
կամ որոշված գնով վերցնել: Որովհետեւ, ինչ-
պէս վերեւն ասացի, հայ հասարակութիւնը
բաւական փող էր ծախսել այդ տեղին կից հո-
ղեր և նրա վրա գտնված շինութիւնները դը-
նելու համար, պարտաւորվեց քաղաքի բարեշի-
նութեան մասնաժողովին նշանակած գնով գնել
հողը և յատկացնել եկեղեցուն ուրիշ շինու-
թիւնների համար, որտեղ եւ Եղիշ վարդապետ
Մուրադեանի օրով շինվեցին եկեղեցական խա-
նութիւններ ու յաջորդաբար կից շինութիւննե-
րով: Այս կերպով եկեղեցու շինութեան խնդիրը
մի առժամանակ անորոշ մնաց, հայերն սկսեցին
ուրիշ տեղ որոնել և իբրեւ ամենայնպէս անհո-
րապետ կանգ առան պ. Դիանեանի և եղբ.
Բաղդասարեանների տեղի վրա: Անցնել 1901
թւին պ. պ. Բաղդասարեանները, ի յիշատակ
Վեհափառ կաթողիկոսի Կարս քաղաւն, նուի-
րեցին իրանց 238 սաժ. գետինը նոր եկեղեցի
շինելու համար: Այս կերպով որոշվեց եկեղեցու
շինութեան տեղի խնդիրը և այժմեան յաջորդ
Կիրեղ վարդապետի ձեռքով և նախադաշու-
թեամբ կազմվեց ընտրած մարդկանցից մի մաս-

նախորդում, որի գլխավոր պարտավորություններն էին զենի Բաղդադի և Երևանի նույնիսկ հողերի կից մասնավոր հողերը, ժողովարարությունը հարկավոր դրամը հաւաքելու և ձեռնարկել եկեղեցու շինութեանը:

Մասնագործը 1500 ռուբլով գնեց Սէլիմ Ալի օղլի անունով մի թիւրքի գետնի իր վերայի շինութիւնով, իսկ այլի տիպ. Հ. Աւան-Իւզընյանին պատկանած 120 սափ. չը կարողացաւ, որովհետեւ տէրը կամենալով օգտվել յարմար միջոցից՝ կրկնապատիկ գին էր պահանջում իր հողի համար: Տեղի հարցը մի կերպ որոշված համարելով՝ մասնագործը գիտեց ուր հարկն էր ժողովարարութեան համար թողնուած թիւն ստանալու և մարմնաւոր իշխանութեան կարծիքը որոշված տեղի մասին իմանալու, որ նորից արգելքներ չառաջանան և վնասներ պատճառեն: Երկու խնդիրների դրական պատասխանն ստանալուց և վեհափառ կաթողիկոսից էլ մասնագործը արդէն իր պաշտօնի մէջ հաստատվելով նոյն 1901 թ. ձեռնարկեց ժողովարարութեան, և մինչեւ այսօր հաւաքել է մօտ 2000 ռուբլի և դեռ շարունակում է, մինչեւ կարողանայ եկեղեցու շինութեան համար անհրաժեշտ դրամը ձեռք բերել:

Այժմ, երբ բոլոր պաշտօնական ձեռնարկութիւնները արդէն վերջացել են և շինութեան ոչ մի արգելք չը կայ, պետք է մասնագործը հաճութեամբ շարունակէ իր վրա դրած պաշտօնը ու աշխատի օր առաջ գլուխ բերել եկեղեցին, որի կարիքը սաստիկ մեծ է: Կարելի համար էր նաեւ, որոնք համեմատաբար աւելի անորոշ պայմաններում աշխատող թիւն և պարտաճանաչութիւն են ունեցել ձեռք գործել այդ կարեւոր գործին՝ յուսալի է որ այժմեան աւելի նպաստաւոր պայմաններում կրկնապատիկ եռանդով կը շարունակեն իրանց գործը, իբրեւ հասարակական բարեխիղճ պաշտօնեաներ, կարողացան իրանց վրա դրած յոյսերը և մօտիկ ապագայում կազատեն Կարսի հայերին եկեղեցու կարիքից: Պարզ է, որ հասարակութիւնը, որի անմիջական շահերի համար կոչված է աշխատելու մասնագործը, իր ջերմ անկողնութեամբ կը ոգեւորէ նրանց, որովհետեւ մեր եկեղեցիների այժմեան պայմանները վիրաւորական են մեզ համար թէ իբրեւ համայնքի են թէ իբրեւ մասնաւոր մարդու: Այսպէս ապրել նշանակում է հասարակական պատասխարութեան ոչ մի զրպացումը չունենալ և մտածել միմիայն իր եսի համար, որը երբեք չի յարմարի կարեւորներին, որոնք, համարեն, միշտ լաւ են վերաբերվել իրանց նոյնանուն հաստատութիւններին, քան նոյն իսկ իրանցից համեմատաբար աւելի բարեխիղճ պայմաններում ապրողները:

Յոյս ունենք, որ մեր բարի ցանկութիւնները երազ չեն լինի և առաջիկայ սեպտեմբերից զոնէ եկեղեցու հիմքը կը ձգվի, որը հրաշալի կախված է հասարակութեան ջերմ անկողնութիւնից, նոյն չափ, դեռ աւելի, կախված է շինութեան յանձնագործի եռանդուն և անձնուէր գործունէութիւնից:

Հ. Նորատեան

ՆԱՄԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԳԱՒԱՌԻԾ

Գորիս, յուլիսի 1-ին

Ուղղի 10 տարի է, որ մեր սարաքնակ ժողովուրդը քանդվել է հացի անբերրութիւնից: Այս տարի միայն նա յոյս ունէր տարեկան ցորենը ունենալու, բայց զփառաբար այդ յոյսն էլ խորտակեց երկար երաշտի շնորհիւ: Գարնան անցանքները բոլորովին անժամանակ չորացան և չը հնձնվեցին: Արդիւ ջրտերից փչացան բոլոր ծառերի ծաղիկները, այնպէս որ մի քանիսն պտուղ չէ կարելի գտնել. պտուղների մէջ մեծ նշանակութիւն ունէր թուրք, որից օղի էին պատրաստում շատերը և վաճառելով մասամբ թեթեւացնում իրանց ցաւը, բայց այդ էլ բնութիւնը չը թողնէ, թէեւ առանց այդ էլ թիւրք այլ եւս օգտւում չը կայ ակցիդային տուրքը բարձրացնելու պատճառով: Այդ իսկ պատճառով, չը նայած Բագուի այժմեան կրիզիսին, սարսափելի թիւ են հանում օտարութիւն գնացողները: Երաշտը փչացրեց և խտրեց, որը գիւղացու ապրանքը ութամեայ ձմեռը կերակրելու համար այնպիսի մի պահանջ է, ինչպէս և հարցը Դրանում մեղաւոր է ժողովրդի տգիտութիւնը և անկարողապաշտութիւնը: Գորիսի սարից ընդունվ է մի սքանչելի գետակ և մարգագետիններում անհամար աղբիւրներ կան, որոնցով կարելի է ոչ թէ միայն Գորիսի խոտաւեղերը ջրել, այլ և տարբ քան անգամ աւելի տեղ, բայց որովհետեւ հերթապահութիւն չը կայ ու իրարից գողանում են ջուրը, այդ պատճառով սեպտեմ-

բերից ռազպար գիւղացին, չը թելով ուրիշ ծախսերը—հացը, չորը, զանազան հարկերը և այլն, կանխիկ փողով գնում է խոտ, իսկ փողը ձեռք է բերում պարտքով, որի տակ տնքում է բառիս բուն նշանակութեամբ:

Մեզ մօտ սկսել են դալ օտարութիւնից հասարակացի ընտանիքներ ամառը անցկացնելու: Դրանց ասելով՝ Գորիսը իբրեւ ամառանոց վատ չէ շատ տեղերից: Եկուորներին գլխաւորապէս զարմացնում է այստեղի գերտեղեւան ջրի գիւղը, որ արվել է մի քանի տարի առաջ: Առաջ էլ գրվել է, որ մեր գիւղում կան զանազան տեսակի հանքային ջրեր, սակայն հետազոտող չը կայ: Այդ բանի համար յոյսներս զրել ենք այժմեան ուսանող սերնդի վրա: Քիչ ժամանակից յետոյ Գորիսը կունենայ բարձր ուսումնական հաստատություններ, և ընկերները, ամառն զնալու են Տաթևի վանքը և մտադիր են Գորիսում մի երկու ներկայացում տալ: Ծառ ուրախ ենք և անհամբեր սպասում ենք խմբի գալուստի:

Խ. Մէլիք-Օհանեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ալեքսանդրօպոլ, յուլիսի 7-ին

«Մշակ» 134 համարում կետեղված էր Բագուից Եղիշէ աւազ քանաչափի նամակը իմ յայտարարութեան հանդէպ պետական օրինադրերից իմ արած թարգմանութեան առթիւ: Իմ հայ լուսաւորչական եկեղեցու տնտեսական և վարչական մասերի վերաբերմամբ, Գեղամեան քանաչափի յայտնում է, որ դեռ 1900 թուականին մի և նոյն յօդուածներ օրինադրերից թարգմանել է ինքը և ուղարկել ուր հարկն է տպագրութեան իրաւունք ստանալու, որը դեռ չէ ստացել: Յայտնում է նաեւ, որ իր թարգմանութեան մէջ մտել են օրինադրերի այն մասերը ու յօդուածները, որոնց հիման վրա հոգեւոր և մարմնաւոր դատաստանական ատեանները և իշխանութիւնները դատում և վրձնում են հայ եկեղեցու և եկեղեցականութեան վերաբերեալ գործերը, և վերջապէս ասում է, որ ձեռնարկած է եղել թարգմանել նաեւ պատժական օրինադրի որոշ մասերը, բայց որովհետեւ յիշեալ օրինադրերը չուտով փոփոխութիւնների է ենթարկվել, այդ պատճառով այդ մասը առ այժմ դադարեցրել է: Առաջարկում է, որ եթէ ես յանձն կառնեմ թարգմանել օրինադրերի և այն ընդհանուր մասերը ու յօդուածները, առանց որոնց իր կարծիքով իմ աշխատանքը իբրեւ իմ մասը, ես, գրում է հայր Գեղամեանը, ռուսալեզու թարգմանելու տեղի կը տամ և իմ թարգմանութիւնը չեմ տպագրի:

Պարտականութիւն են գրում յայտնել, որ նախ՝ Գեղամեան քանաչափի եթէ թարգմանել 1900 թուականին, այն ժամանակվանից մինչեւ հիմա մեծ փոփոխութիւններ են մտել օրինադրերի մէջ և նոյն իսկ Օրդոնիւրայում (XII т. I ч. УСТАВЫ ДУХОВНЫХ ДѢЛЪ ИНОСТРАННЫХ ПОСЛАДАНІЙ, ИЗД. 1896 г.) կան փոփոխված մասեր, նշանակում է իր թարգմանութիւնը չէ կարող լինել լիակատար և առանց թերութիւնների:

Երկրորդ՝ իմ թարգմանութեան մէջ նոյնպէս մտած են այն բոլոր յօդուածները, որոնց հիման վրա վարչական և դատաստանական ատեանները դատում են որոշում են հայ լուսաւորչական եկեղեցու և եկեղեցականների վերաբերեալ գործերը: Երեւի յայտարարութեան մէջ «ստակ» բառը թիւրիմացութեան տեղի է տուել: Ուրիշ կերպ միայն չէր ունենայ անել մի թարգմանութիւն սահմանափակ ձեւով: Եւ երրորդ՝ պատժական օրինադրից էլ (վերջին հրատարակութիւն, 1885 թ.) քաղել են հարկաւոր մասերը, իսկ թէ ասել, չուտով այդ գիրքը մեծ փոփոխութիւնների կենթարկվել և դրա համար չը թարգմանել, այդ, իմ համեմատ կարծիքով, սխալ է և եթէ հրատարակվել էլ ապագայում նոր օրինադրեր, նրա մէջ շատ քիչ բան կայ թարգմանելու և այս փոքր թերութիւնը չէ կարող խանգարել ամբողջ աշխատութեան գործին, և վերջապէս, քանի որ այդպիսի նոր օրինադրեր չը կայ, այդ մասին ապարդիւն կը լինի խօսելը:

Այսպէս նշանակում է, որ իմ թարգմանութիւնն ներկայացնում է ամբողջ պատկերը պետական օրինադրերից ընտրած մասերի. իսկ Գեղամեան քանաչափի աշխատութիւնից պակասում է, իր ասելով, պատժական օրինադրերը: Եթէ հարց. ինչպէս է կամենում Գեղամեանը, մի աշխատութիւն, որ արդէն աւարտված է, ջնջել լցնել: Լաւ չէր լինի, որ տէր-հայրը, եթէ ունէր մի այդպիսի կատարած թէ անկատար գործ, վաղօրոք յայտնած լինէր, քան այժմ, երբ իմ աշխատութիւնն հրապարակի վրա է դրված և ձմարիտ խոստովանելով՝ դժուարին է թողնել առանց տպագրութեան, եթէ անկատար այլ օրինական արգելքների չը հանդիպի քաղաքացիական իշխանութեան կողմից:

Ալ. Սանդեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բագու, յուլիսի 8-ին

«Մշակ» № 143-ի մէջ պ. Ն. Դաւթեանը

իր «Ո՞վ է մեղաւոր» յօդուածում ի միջի այլոց գրում է:

«Մէկը յանդգնում է հրապարակով ցատկալցութիւն, կարեկցութիւն յայտնել դէպի աշխատող դասակարգը, նրա որպէս թէ պաշտպանը հանդիսանալ, հայտնել ուրիշներին, որ հարստահարում են, նրանց դրութեան մէջ չեն մտնում և այլն և այլն: Բայց երբ նոյն բանաւոր դասակարգի միմիտ անդամները հաւատում են այդ մեծախօսին և իրանց անտեսած կօպէկները նրան են յանձնում, նա առանց խղճահարկելու մարքագործում է այդ կօպէկները և լրբաբար դարձեալ շարունակում է գրել... Մենք այդ էլ ենք իմանում և դարձեալ լրբաբար:

«Մշակ» իւրաքանչիւր ընթերցող, եթէ հետևում է նրա աշխատակցների յօդուածների ոգուն, առանց տատանվելու կապէ, որ պարոնի յիշած յօդուածների տակ եղել է իմ ստորագրութիւնը:

Այն, պ. Դաւթեան, ես եմ լրբաբար հաւատածներ տեղում, ես եմ անսովորաբար գրկվածների դատը պաշտպանում և ես կարծում եմ, որ ինձ էք ի նկատ ունեցել այդ յօդուածում: Եւ եթէ հաստատում էք այդ քաղաքական միջնեւ այս ամիս 20-ը հրապարակով յայտնել այդպիսի յօդուածագրի յանցանքները, որոնց վրա դուք չեղտում էք, և այն պարոնների անունները, որոնք կը կառնեն ձեր կողմից ներկայ լինելու՝ քննելու և դատելու ինձ: Հարցէ՞ «Касим» լրագրի խմբագրատուն՝ ժամը 11—1:

Ռ. Յովհաննանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Կարա-Մուրզայի աշխատութիւնների հրատարակութեան օգտին ստացանք կիսվից, մի խումբ հայ գիւնորներից, Թ. Դաւթեանի միջոցով, 13 ռուբլի և Կերչից, Միհրան Պալեանի միջոցով, 4 ռուբլի 50 կօպէկ, որ նուրիշ են հետեւեալ անձինք.—Յ. Մնատեան, Գ. Վարդանեան, Բ. Յակոբեան, Գ. Քէօսեան 1-ական ռուբլի և Հ. Վարդանեան 50 կօպէկ: Նախկին ստացանքների հետ միասին այժմ ունենք 1300 ռուբլի 30 կօպէկ:

«Մուրճ» ամսագրի հրատարակութիւնը, որ ձեռք էր բերել Ա. Արաքսեանից Կ. Կրասիլնիկեան, այժմ անցնում է նոր հրատարակչի ներքին ձեռքը՝ այն է Լեւոն Սարգսեանի և Աւետիք Փողոսեանի: Ամսագրի հրատարակութիւնը չի ընդհատվի և կանոնաւորապէս կը շարունակվի:

Մեզ ինտրում են հաղորդել, որ առաջիկայ կիրակի, յուլիսի 14-ին, Թիֆլիսի Ալեքսանդրեան այգում տեղի կունենայ մեծ զբօսանք: Զբօսանքի թիւնից ազատող Կայսերական ընկերութեան Թիֆլիսի բաժանմունքի օգտին Զբօսանքի ժամանակ կը նուազեն թէ տեղական և թէ եւրօպական երաժիշտներ, տեղի կունենան մրցութիւններ վազելու մէջ և կը տրվեն մրցանակներ:

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսում հրատարակվող «Кавказский Вестник» ամսագիրը անցել է նրա նախկին խմբագիր-հրատարակչի Կորնեյովից ուրիշի ձեռք: Ամսագիրը գնել է պ. Գ. Մելիք-Կարաբեղեան:

Ֆինանսների մինիստրութիւնը յայտնում է, որ նա օրինական պատժի կենթարկէ այն մարդկանց, որոնք վերջին ժամանակներս վաճառում են փողիցըած սպիրտ: Փոչին գործ է անվում ջրի մէջ լնծելուց յետոյ և ներդրում է, որպէս խիստ արեւոյդեղի միջոց: Փոչիացրած սպիրտը պատրաստվում է Միացեալ-Նահանգների Բոստոն քաղաքում և ահագին քանակութեամբ բերվում է Ռուսաստան:

Չորեքշաբթի, յուլիսի 10-ին, Թիֆլիս հասաւ Օրլանդան այրին: Լիւդովիկ իր չքամիքի հետ և հետեւեալ օրը, յուլիսի 11-ին, ճանապարհ ընկաւ դէպի Վրդիկապկալ:

Պետական բանկի գլխաւոր վարչութեան կարգադրութեամբ հրատարակված է մի բրօշուր, որի նպատակն է ծանօթացնել ազգաբնակչութիւնը այժմեան օրէնսդրութեան հետ ժողովրդական մանր կրէդիտի մասին: Այդ բրօշուրը, որ տպագրված է մի քանի հազար օրինակ, տեղեկութիւններ է տալիս նաեւ կոնպէրատիվ հաստատութիւնների օրինակելի կանոնադրութեան մասին:

«Донская Рать» լրագիրը հաղորդում է, որ ֆինանսների մինիստրութիւնը կազմակերպում

է դասախօսների շրջիկ խմբեր հետաւոր խուլ գիւղերն ուղարկելու համար:

Կառավարչական շրջաններում հարց է բարացրած հրատարակելու մի օրէնք, որի վրա թեամբ հոգեկան հիւսնադրութիւնը ամուսնանալու ժողովան յարգելի պատճառ համարվի:

ՂԱՂԱՐԻՑ մեզ գրում են. «Անցեալ 27-ին ս. Գէորգ ուխտատեղի եկեղեցու կողմից Ոսկան Քալանթարեանը, ի նշան երէցփոխական 10 ամեայ անընդհատ տնտեսական, կազմել էր ուխտատեղի մի համեստ հացիկոյթ, ուր հրաւիրված յաջորդը բոլոր հոգեւորականների հետ և բոլոր անձինք—երէցփոխներ, հոգաբարձներ ու հաշիւտեաներ—որոնք յընթաց պաշտօնավարութեան ունեցել են և ունենալու տեսակ պաշտօններ հասարակական եկեղեցական շրջանում: Թէ ինչ առաջադիւթիւն է արել ուխտատեղին 10 տարուամեայ երեւում է հաշիւներից, վերականգնացան նորից տնկած ծառուղիներից, պարտէզներից և մեծ քանակութեամբ պտղատու և չկա համար պատրաստված հազարաւոր նորաւոր ծառերից, որոնք պատուաւարելով հիմունքներից ձեռքով ծախվելու են յօգուտ զեցու, կազմելով արդիւնքի մի նոր բիւր: Ուխտատեղիների համար շինված յարմարութիւններ—երկու կարգ տներ ու նեակներ: Եկեղեցում հիմնված է արքայապետի, որով հոգեւորականը աշխատում է լրացիլ դրութիւնից, ցանկալի էր, որ մեր զաքի միւս եկեղեցիներումն էլ լինէին այլ սի արկներ: Այդ ժամանակամիջոցումն էլ վել բաղանիսը երկու բաժանմունքով առաջ խանցի հայ Գուրգենեանցի հաշիւով ու պէս նրա ջանքով շինվում է եկեղեցու դռնը: Կատուրը զղարեցի Արքանախանի հաշիւով:

ՄԵՆ-ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻՑ մեզ գրում է «Ամառվայ շաբթի պատճառով Ղարաբաղի այժմ բաւական կենդանութիւն է ստացել: Ինչ հիւ ամառանց եկողներն Պալիս են և ոչ ամառներ: Այսպէս, մօտ ժամանակներս Երևանի Զաքէ, դերասան Սարազեան և Թէլէկեաններ: Յուլիսի 1-ին տեղիս օրիորդուսնարանի դահլիճում տիկ. Զաքէ և Բաւան Սարազեան սիրողների մասնակցութեամբ խաղացին «Ձոնի փոխաբէն զոն» մեղիս և «Տիկին եմ, տիկին եմ» վոքը: Օրօր. Թէլիկեանները ոչ միայն մերթնում են, այլ և իրենց հետ միասին միւս դերասանների հետ և ընդհանուր ոյժով մի քանի ներկայացում տալ, այլ և ամենայն դարձեւ իրանգարելու այդ ներկայացում սակայն ներկայացումը կայացաւ և բաւականին աղող, թէեւ ոչ անքան արդիւնաւէտ: Ներկայացումից մի շարքով անմիջապէս յետոյ. Մարի-Հրանայր Թէլիկեան, մասնակցութեամբ պ. Գնունու և օր. Ա.-ի, խաղաց «Տիկին», «Роговой дебют» և «Տիկինը ննջէ», տոմարները, չը նայելով անմատչելի լինի, ծախեցին, սակայն ժողովուրդը դիմաց այդ անմիտ վոքըլիւններից:

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են. «Յունիսի նահանգական գեղարվիկ Տարալսկին իր գիրք և անձամբ շրջեց իր գիրքով, Բագու և Արտուշ և ուրիշ գիւղերի այլով սերեր գիտելու. անմիջապէս գտաւ դրութիւն և խիստ կարգադրութեան արեց ջրերի մասին որից յետոյ ահա տաս օր առատ ջրեր են ստ. մ առններով: Արաքսում ամառացած աների լաւարները այլ ևս չը գիտենք ինչ գրքով պահպանվում են և չեն քանդվում: առաջ շատ յաճախ էր կրկնվում:

ԱՍԽԱՐԱՐԻՑ մեզ գրում են. «Տեղիս հանաներից մէկը, Շ. ստացել է Գ. Նիկողոսի վրց 20 հատ Магда Нейман-ի «Արաքս» գրքից և իր սուրը պարտականութիւն համարում, որքան կարող է, շատ տարածել զապիւրի մէջ: Գիրք տարածելը շատ դժուար է. իւրաքանչիւր մի անողից պէտք է անգամ խնդրել. և տէր-հայրը կատար այդ պաշտօնը անխնայ: Գրքի արժէքը Յայտնի է, թէ ինչ է պարունակում իր կեղտոտ գիրքը, և այդ գիրքը տարածելու պարտականութիւնը յանձն է հայ քանաչափի նախանձելի եռանդը:

ԱՍԽԱՐԱՐԻՑ մեզ գրում են. «Ուսումնական իշխանութիւնից կարգադրութիւն ստացվել, որ մեր քաղաքային դպրոցներն աշխարհական (երկրաշարժաբանական) կայան

հիմնովի շինությունը, որ բաղկացած էր լինի
երկու սենյակներից, պետք է պատրաստ լինի
սեպտեմբերի 1-ին»:

Մեզ խնդրում են ուղղել հետեւեալ ղեկաւոր
ները, որոնք մնացել են «Մշակի» 139 համա-
րում տպագրւած «Զրի հարցը Սուրմալուի գաւա-
ռում յօդուածի մէջ. երկրորդ երեսում տրա-
ված է ամսաթիւ 18-ին»։ պետք է լինի «մարտի
18-ին»։ տպագրւած է այս տարւոյ ապրիլի տա-
րեց, պետք է լինի ճշմարիտ տարւոյ ապրիլի
տարին»:

ՄՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԱՅԻՑ

Բերլին, յուլիսի 14-ին

Վերին ժամանակներ Թիֆլիսի Թերթեւում
միմանց ետեւից լոյս տեսնւում լուրեր այստեղի
ուսանող պ. Սալաթեանի մասին, լուրեր, որոնք
գալիս էին հայ հասարակութեան աւետելու,
թէ այդ պարոնն ինչպիսի եռանդով, ինչպիսի
միջոցներով աշխատում է գերմանացիներին
ծանօթացնել հայկական կեանքը, հայի անցեալին
ու ներկային:

Փորձին անտեղեակ եւ պ. Սալաթեանին չը
ձանաղդ ընթերցողն անշուշտ այդ լուրերից
ողբալով ասէր կարծէ, թէ իսկապէս մէջ
տեղը մի մեծ ու օգտակար գործունէութիւն
կայ, թէ մի ուրախալի երեւոյթ է տեղի ու-
նենալով Թիֆլիսում:

Այն, նա իրաւունք ունի այդպէս կարծելու,
մասնաւոր որ Թիֆլիսի Թերթեւից մէկը նոյն
իսկ առաջնորդող յօդուածներով ջատագովեց
այդ պարոնի գործունէութիւնը, փառաբանեց
նրա գործերի եռանդն ու նպատակաւորութիւնը
կոտորակներով, չնչնեց, թէ ողբան գեղեցիկ գործ
է նրա նախագիծած «կուլտուրական ցուցահան-
դէսը Բերլինում»:

Այդ բոլորից յետոյ «Մշակի» ընթերցողնե-
րին, անշուշտ, տարօրինակ պիտի երեւար իմ
լուրերը. Եւ իսկապէս, իբրեւ «Մշակի» մըշ-
տական թղթակից-աշխատակից, գրել Բերլինի
կեանքից, գրել ամսին մի նշանակուր երեւոյթի
մասին եւ մի խօսք անգամ չանել, երբ հայ
գործիչը դասախօսութիւններ է կարդում, յօ-
դուածներ է գրում հայերի մասին, հայկական
ցուցահանդէս է կազմակերպում—դա աւելի
քան դատապարտելի անտարբերութիւն է:

Սակայն պ. Սալաթեանն այնքան մեծ եռանդ
ունի, որ միշտ էլ կարող է լրացնել ինձ նման
անտարբեր թղթակիցների պակասորդը.—նա
ինքն իր մասին զանազան թերթերի թղթակի-
ցութիւններ էլ է գրում, լուրեր էլ է հաղոր-
դում Եւ հէնց դրանից էլ առաջ է գալիս ամ-
բող թիւրիմացութիւնը:

Ան այդ ամենն աչքի առաջ ունենալով՝ ես
վերապէս ստիպւում եմ գէթ մի քանի խօսքով
զարգել հարցի էութիւնը եւ դրանով մի կող-
մից լուսարանել իմ լուրերն ապագայում, իսկ
միւս կողմից ընթերցողներին ազատել թիւրի-
մացութիւնից:

Պ. Սալաթեանն այստեղ սովորում է արեւե-
լան լեզունը, սակայն դեռ սովորելը չը վեր-
ջացած՝ այնքան ինքնավստահ է դարձել, որ
իրան ձեւացնում է հայոց ազգի մի նշանակուր
գիտական, մի հմուտ հայկաբան, որի առաջ
ազգաներ են պրոֆէսոր Սալաթեան, այստեղի
պրոֆէսոր Լեւոն եւ նոյն իսկ պրոֆէսոր Մառ-
թիւն ալապիսի դիրք հաստատելու համար է,
որ պարոնն ինքն իրան արժանացրել է դոկտո-
րական տիտղոսին Այն, նա ամեն տեղ իրան
դոկտոր է անուանում, բայց ինչպէս, ինչ իրա-
ւունքով ձիւղ է, նա աւարտել է Մոսկովայի
մանաւարանը, սակայն չէ ստացել դոկտորի
տիտղոս, չէ տուել դրա համար անհրաժեշտ
քննութիւնը Ուրեմն ինչ կարիք կայ մի այդ-
պիսի կեղծիք թոյլ տալու, մասնաւոր որ այդ
կեղծիքը հետզհետէ բացվում է օտարների ա-
ռաջ. Բերլինցի, երեւակային, թէ գերմանա-
ցիներն ինչ գաղափար պիտի կազմեն հայերի
մասին, երբ տեսնում են այդ ինքնակոչ գիտ-
ականի վարմունքը, երբ հասկանում են նրա
կատարած կեղծիքը:

Ձիւղ է, պ. Սալաթեանն այստեղ կարգացել է
մի երկու դասախօսութիւն, բայց մի՞թէ դա մի
մեծ քաջագործութիւն է, որի մասին արժէ
թմբկահարել ու լրագրելու հարաւորոց
բարձրացնել. Ձէ որ նոյնանման դասախօսու-
թիւններ կարգացել են եւ ուրիշ ուսանողներ,
ուրիշ շրջաններում եւ նոյն իսկ աւելի մեծ
աշխուհիներն են ունեցել, բայց ոչ ոք իրան
թոյլ չէ տուել այդքան աղուկ բարձրացնելու:

Եւ ինչ կարիք կայ համեստութեան շրջանակից
դուրս գալ, լուս ուղտ դարձնել...

Պ. Սալաթեան, իբրեւ հարուստ ուսանող,
կարողանում է իր գրած դասախօսութիւններն
ու յօդուածները փողով թարգմանել տալ եւ
այդպիսով հրապարակ հանել Մենք ոչինչ չու-
նենք դրա դէմ եւ նոյն իսկ կը գովէինք այդ
վարմունքը, եթէ նրա հետ կապված լինէր
համեստութիւն» կոչվող յատկութիւնը: Սա-
կայն չենք հասկանում, թէ ինչպէս պարոնը միշտ
իր մասնաւոր գործերը կապում է ամբողջ հայ
ազգի, հայ ժողովրդի անուն հետ, ինչպէս է
կարծում եւ ուրիշներն էլ հաւատացնել աշ-
խատում, թէ մի սիւնեակ կամ մի քանի
երես յօդուած գրելով նա արդէն մեծ գործ է
արել հայ ազգի համար, թէ արդէն իրաւունք
ունի «հայ գիտական» համարելու Մենք արձա-
նագրում ենք այդ հանգամանքը, աչքի առաջ
ունենալով, որ պ. Սալաթեանն քանքարաթաղոյց
ընաւորութիւնն է: Նա առանց ճշմարտ իր
այդ կարծիքները հաղորդում է ամենքին, նոյն
իսկ գերմանացիներին, որով եւ առիթ է տա-
լիս շատ աննպաստ գաղափար կազմելու հայի
համեստութեան մասին, որով եւ արդէն ոմանց
հակակրօթիւնն է չարժեք Օրինակ, այստեղի
հայկաբան պրոֆէսոր Լեւոնն հրատարակել էր
«հայկական երեկոյթի» ներկայ լինելուց, եւ-
թաղերով, թէ պ. Սալաթեանն է նրա գլխա-
ւոր կարգադրիչը: Նա ընդունել էր առաջարկ-
ված պատուաւոր տոմար միայն այն ժամանակ,
երբ հերքել էին այդ կարծիքը: Եւ Բերլինի
ուսանողները միշտ էլ կարող են այդպիսի ա-
նախորժութիւններին հանդիպել, երբ այդ պա-
րոնը շարունակէ յիշեալ ընթացքը:

Մի նմուշ եւս. տեղի «Schiller-Theater»-ի
դիրեկտոր Լեօպոլդին, մի քանի ուրիշ հայա-
սերերի մասնակցութեամբ, մօտ օրերս կազմա-
կերպեց «հայերին օգնող մի կոմիտէ»: Այդ ի-
րողութիւնը մեծ ուրախութիւն պատճառեց
այստեղ ապրող բոլոր հայերին: Իսկ մի քանի
գիտական—պ. Սալաթեանը, գիտէր ինչ է
անում. նա մի գեղեցիկ օր դնում է իր ցի-
լիսը, վերցնում էր բազմաշարք պօրտֆելը
եւ գնում Լեօպոլդին մօտ ու ներկայացնում
իր գրած մի նոր դրամատի («Մարգարէ» անու-
նով), ինչպիսիք ներկայացնել Շիլլեր—Թատրո-
նում: Ինչ ասեմք, երեւում է, պարոնի առա-
ջանդը շատ փոքր է գտել հայկաբանութեան
ասպարէզը. նա ուզեցել է թատերական առ-
պարէզում էլ փառքի վարդեր քաղել, ուստի եւ
ստեղծել է այդ դրաման: Գուցէ, ինչպէս ինքը
պ. Սալաթեանն է կարծում, այդ դրաման
վերականգնեց (sic) Շիլլերի չիօլանի
ամբողջ մարդկութեանն աւետել յաւիտենա-
կան մի մեծ գաղափար (պարոնը մտադիր է
այդ դրաման թարգմանել տալ եւրոպական
բոլոր լեզուներով՝ գերմաներէն, ֆրանսերէն,
անգլիերէն, իտալերէն, ռուսերէն եւ այլն),
սակայն չենք հասկանում թէ ինչու նա մի
այդպիսի անհամեստ դիմում է անում պ. Լեօ-
պոլդին հէնց այդ խառն օրերում, ինչու է
ձանրաբեւոժում նրան մի այդպիսի անյարմար
խնդրով: Ձէ որ այդպիսի վարմունքը, բացի
սանձութիւնից ու հակակրօթից, ուրիշ ոչինչ
չէ կարող գարեթեցնել: Ինչ գաղափար պիտի
կազմել պ. Լեօպոլդին ինչպիսի հայապէսները
մեր ժողովրդի մասին, տեսնելով նրա «գիտա-
նական» այդպիսի քաղիքը...

Սակայն այդ դեռ բոլորը չէ. Պ. Սալաթեան
սպառնում է եկող սեպտեմբերից Բերլինում
մի «հայկական ցուցահանդէս» սարքել, որպէս
զի նրանով կարելի լինի հայկական կուլտու-
րայի մասին գաղափար կազմելու: Գեղեցիկ նը-
պատակ, որի համար պարոնը պահանջում է
հայոց ազգից 15,000 ռուբլի: Նա այդ փողը
հանգանակելու համար արդէն դիմումներ է ա-
նում զանազան հարուստների Սակայն ինչ
այդ ցուցահանդէսի ծրագիրը եւ ո՞վ պիտի ի-
րագործէ այդ ծրագիրը: Հէնց իր պ. Սալա-
թեանի համար էլ պարզ չէ այդ բանը: Մեր
հարցումներին նա միայն կցկտուր կերպով
պատասխանել է, թէ այդտեղ ցոյց պիտի
տրվեն հայկական շորեր, պատկերներ, պիտի
երգվեն հայկական երգեր եւ կարգադրվեն դա-
սախօսութիւններ: Սակայն ո՞վ պիտի լինի գոր-
ծի ղեկավարը: Ի հարկէ—ինքը պ. Սալաթեան
եւ հէնց միայն այդ հանգամանքը բաւական է
գործի աշխուրդեան համար: Կարծում ենք
մեզ հետ միասին այստեղ ապրող բոլոր հայե-
րը կը վկայեն, որ պ. Սալաթեան իր բնաւո-
րութեամբ, իր ընդունակութիւններով միայն
գամայն անհամապատասխան է մի այդպիսի
մեծ գործի համար: Հէնց չէ, խաղալիք չէ մի
այդպիսի ցուցահանդէս կազմակերպելու: Դրա
համար անհրաժեշտ է ամիսների, տարիների

աշխատանք, հարկաւոր են բանիմաց մարդիկ:
Գիտենք, որ պ. Սալաթեանն աշխուրդում չէ
այդ բանի իրագործել, ուրեմն ի՞նչու է միտք
պղտորում, ի՞նչու է տեղիս գերմանացիներին
մոլորեցնել աշխատում: Եթէ նա գործ կա-
տարելու անկեղծ ցանկութիւն ունի, թող
այդ ցանկութիւնը համաձայնեցնէ իր ոյժերի
ու ընդունակութիւնների հետ: Նա շատ մեծ
ժառանգութիւն արած կը լինի հայ հասարակու-
թեանը, եթէ ամբողջովին նուիրվի իր մասնա-
ւորութեանը եւ միշտ իր չափը ճանաչէ, յի-
շուով որ աշխարհում մարդկային մի շատ լաւ
յատկութիւն կայ, որի անունն է «համեստ-
ութիւն»:

Մեզ յայտնի է, որ եկող սեպտեմբերից Բերլին-
ում հայերի մասին մի շարք դասախօսու-
թիւններ պիտի կարդան պ. Լեօպոլդ, Բոր-
թալ, պրոֆէսոր Լեւոն եւ հաւանականօրէն
պրոֆէսոր Հարոնակ ու անտեսագէտ Բերնշտայն:
Դա իսկապէս շատ օգտակար գործ է, որի ա-
շխուրդեանը ամեն կերպ պիտի նպաստել:
Հէնց այդ գործի աշխուրդեան տեսակետից է,
որ մենք անկեղծ խորհուրդ ենք տալիս պ.
Սալաթեանին հանգիստ թողնել գերմանացի
հայապէսներին, նրանց զգուշէն չը տանել այդ-
պիսի անտեղի դիմումներով ու անհամեստ
խնդիրներով: Հակառակ դէպքում նրանք կա-
րող են հրաժարվել իրանց մտադրութիւննե-
րից, որ ցանկալի չէ ամեն մի սրտացաւ հայի
համար:

ՄՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ֆրանսիական լրագրիչները, «Daily Expre-
ss» լրագրիչը քաղելով հաղորդում են, իբրեւ
լուր, թէ իբր գերմանական Վիլհելմ II կայսրը
չուտով կը գնայ Պարիզ, որպէս զի ամերիկացի
բարեկամական եւ խաղաղ յարաբերութիւնները
երեւալետեան եւ երկպետեան դաշնակցութիւն-
ներին պատկանող պետութիւնների մէջ:

—Մօտ ժամանակներում Պարիզում, արտա-
քին գործերէ մինիստրութեան մէջ, տեղի ու-
նեցաւ մի միջազգային խորհրդակցութեան
նիստերի բացումը, որի նպատակն է ոչնչաց-
նել կենդանի ապրանքի գոյնելի վաճառքը: Առա-
ջին նիստի բացմանը ներկայ էին 38 պատգա-
մաւորներ, որոնք եկել էին Պարիզ զանազան
երկրների եւ պետութիւնների կողմից: Նիստը
բացվեց ֆրանսիական արտաքին գործերի մի-
նիստը Դէկլարաիի ձառով, որ ողջունեց պատ-
գամաւորներին ֆրանսիական կառավարութեան
կողմից եւ յոյս յայտնեց, որ խորհրդակցու-
թիւնը միջոցներ կը գտնի այդ ամօթալի վա-
ճառքը ոչնչացնելու համար: Ապա ժողովը ձեռ-
նամուկ եղաւ պայտօնատար անձերի ընտրու-
թեան եւ իրան նախագահ ընտրեց անհատոր
Բերանտէին, իսկ փոխ-նախագահ Պարիզի շէյ-
ցարական դեպուտ Լարիբին:

—«Kölnische Zeitung» լրագրի թղթակիցը
հաղորդում է, թէ չէխական մամուլի կղերական
օրգաններում ագիտացիա է սկսված, որով պա-
հանջվում է վերացնել կաթոլիկ հոգեւորական-
ների համար պարտադիր կուսակցութեան
օրէնքը:

—«C. P. B.» լրագրում կարդում ենք,
հայերի բարեկամները Գերմանիայում, ի նկա-
տի ունենալով Բրիւսէլի հայապէսների կօնգ-
րէսի բացումը, հրատարակել են հետեւեալ կո-
չը, որի տակ ստորագրել են շատ յայտնի ան-
ձինք: «Բրիւսէլում հայերի անխնայ ջնուդը,—
ասված է այդ կոչի մէջ,—անընդհատ շարու-
նակվում է: Փորձը ցոյց է տուել, որ Թիւրքիան
միշտ զիջող է գտնվել այն ղեպքերում, երբ
եւրոպական պետութիւնները եռանդով եւ
միահամուռ ջանքեր են գործ դրել ազդելու
ստորագրի համակրանքը հայ տանջվող ազգա-
բնակչութեան վրձակի վերաբերմամբ եւ դիմում
ենք մեր հայրենակիցներին, եւ առանձնապէս
մամուլին խնդրելով աջակցութիւն ցոյց տալ
Բրիւսէլի կօնգրէսի ձգտումներին եւ հայերի
բողոքին ամեն տեսակ բռնութիւնների դէմ»:

—«НОВОСТИ» լրագիրը մի քանի մանրամաս-
նութիւններ է հաղորդում վենետիկի ս. Մար-
կոսի հռչակաւոր աշտարակի կործանման վե-
րաբերմամբ: Որովհետեւ աշտարակի դուռ-
թիւնը վերջին ժամանակ կործանման երկրպի-
տեղիք էր տալիս, ուստի ձեռնարկել էին նորո-
գումներ անել նրա մէջ թէ դրանց եւ թէ ներ-
սից: Մտադրութիւն կար սկսել նորոգումը
կողմնակի նեղուկներ դնելով: Կործանման օրը
այն ձառարարապետը, որ հսկում էր նորոգման
աշխատանքների վրա, նկատեց, որ աշտարակից
թափվում է ոչ միայն նրա սոււաղը, այլ եւ
մարմարի կտորներ: Նա շտապեց իմաց տալ այդ
մասին իր ընկերներին, որոնք զբաղված էին
ներսի աշխատանքներով. ապա սկսեցին հե-
ռացնել հասարակութիւնն եւ բանուորներին:
Չանցաւ այդ ժամանակից կէս ժամ, որ աշ-
տարակը կործանվեց սարսափելի որոտով եւ
զարկեցով եւ նրա թանձր փոշին ծածկեց մեր-
ձակայ թաղերն ու փողոցները: Մ. Մարկոսի
աշտարակի հիմնադրութիւնը վերագրում են
Մ. Մարգարէի անունին:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ԲՈՒՄԱՑ ԳՈՐԾԱԿԱԼԱԳԻՐՆԵՐ

11 յուլիսի

ՊԱՐԻԶ: Կրօնական միաբանութիւններին
պատկանող ուսումնարանների փակման պատ-
ճառով տեղի ունեցան եռանդուն ցոյցեր: Ձեռ-
բակալված են մօտ 300 անձինք, որոնց մէջ են
Կօպպէ, Լէրօյ, Գաստօն Մէրի, Կոմս Ուրբէն
դը-Մայլէ: Բացի վերջինից՝ մնացածները բաց են
թողնված:

ՄՈՍԿՎԱ: Պոլիտեխնիկական թանգարանում
բացվեց Ռուսաստանի զանազան տեղերից ժո-
ղովրդական գրավաճառների խորհրդակցութիւնը:
Ի նկատի են առնված գրքերի տեղափոխու-
թեան վարձին, գրավաճառների կրէդիտին եւ
գրավաճառական գործի համար կիրակնօրեայ
ուսումնարաններ բանալուն վերաբերեալ հար-
ցերը:

ԽԱՐԲԻՆ: Խորհրդային համաձայնակը թուլա-
նում է. չինացի բանուորները փախան զանա-
զան կողմեր: չինութիւնները կատարելու ժա-
մանակամիջոցը կորաւ:

ԽԱՐԲԻՆ: Ձինացի բանուորների միջոցով Ին-
կուռ բերված խօլերան տարածվեց չինական ա-
րեւելեան երկաթուղու գծի ուղղութեամբ եւ
յուլիսի 20-ից սկսեց երեւալ եւ Խորհրդում:
մինչեւ յուլիսի 1-ը հիւանդացան 234 ուսանե-
ր եւ 523 չինացիներ, որոնցից մեռան 81 ուսա-
ներ եւ 363 չինացիներ: Սպասվում է սանի-
տարական խմորի գալուն Պետերբուրգից:

ԼԵՅՊՏԻԳ: Լէյպցիգի բանկի անակութեան
գործի վերաբերմամբ՝ դատարանը վճռեց են-
թարկել զիբեկտոր Էկմեբին հնգամեայ բան-
տարկութեան, զիբեկտոր Գէնտին — եռա-
մեայ բանտարկութեան եւ վերահսկող մաս-
նագործի նախագահ Դօտէլին—15,000 մարկ
գրամական տուգանքի: Մեղադրվածները բացի
սրանից պէտք է վճարեն դատաստանական
ծախքերը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: «Правит. Вѣстник»-ում առ-
պագրված է ֆինանսների մինիստրութեան իրա-
ւաստութեան տակ զանվող գեղարուեստական-
արդիւնագործական ուսումնարանների կանոնա-
գրութիւնը:—Երկաթուղային գծերով բեռներ
տեղափոխելու նոր սակագիրը կը մտցնվի այս
յուլիս ամսի 17-ից:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Յուլիսի 11-ին արեւմտական
դեպուտ միտրօպոլիտ Արքեմա Մաթէոս ման-
րամանաբար նայեց դրամահատութեան տուին:

ԼՕՆԴՈՆ: Թագաւորի առողջութեան վիճակի
բարւոքումը անընդհատ շարունակվում է. Թա-
գաւորը դեռ եւս չէ վեր կենում, բայց ոյժերը
աւելանում են:

ԿԱԶԱՆ: Հրկիզեալներին նպաստող մասնա-
ժողովը, քննելով 861 միջնորդութիւններ, առ-
ւեց 15,500 ռուբլի: Բարձրագոյն չնորված
գումարից:

ԲԵՆԴՐԱՆ: Այսօր պատգամաւորների ժողո-
վում տեղի ունեցաւ նախագահի ընտրութիւն.
ընտրված է պատգամաւոր Ստեպանովիչ, որ
յողթեց կառավարութեան թեկնածու Ռիտտ
Պօպովիչին: Մագից մինիստրական ձգնաժամ:

12 յուլիսի

ՀԻՌՄ: «Tribuna»-ը պաշտօնաւ է համարում
այն տեղեկութիւնը, թէ իտալական թագաւորը
սեպտեմբերին կայցելէ Պարիզ. լրագիրը հիմը
ունի կարծելու, որ թագաւորը 1902 թւականին,
Բերլին գնալուց յետոյ, չի ձեռնարկի այլ եւս
արտասահմանեան ոչ մի ճանապարհորդութիւն:

ԲԱՊՈՒ: Այսօր տեղի ունեցաւ հրդեհ Կաս-
պից-Սեւծովեան ընկերութեան նաւթահանքե-
րում. այրվեցին երկու վիշկաւ:

ՄՈՍԿՎԱ: Գրավաճառների խորհրդակցու-
թիւնը որոշեց կենտրոնական պահեստ սարքել
գաւառներում հրատարակված գրքերի համար:
ՎԵՐՍԱԼ: Սրբ սպայօրններ եւ ինժեներա-
կան զօրքերը Սատորի դաշտում պայթեցնում
էին ակահներ, պայթումից սպանվեցին մի
պօղպորոյչիկ, մի պրապօրչիկ եւ երկու ուն-
տէր օֆիցերներ: վիրաւորված են վեց մարդիկ:
ԵՐՎԱՆ: Կառավարական մի աստիճանա-
ւոր ուղեւորվեց Մարկուզիւնդ, որպէս զի
միացնէ նրան Սպանիային. ամերիկական մի
նաւ եւս ուղեւորվեց այնտեղ Հօնոլուրից,
յուլիսի 29-ին:

ՊԱՐԻԶ: Կղերական ցոյցերը կառավարու-
թեան դէմ կրկնվում էին մինչեւ գիշեր: Նշել
են շատ ձերբակալութիւններ: Մի բէստօրա-
նում տեղի ունեցաւ կռիւ կղերականների եւ
սօցիալիստների մէջ, որի ժամանակ արձակու-
ցին երկու գնտակներ եւ վիրաւորվեց մի այ-
ցելու: Լուր է պտուում, թէ մի քանակայ
ձանր վիրաւորված է դանակի հարուածով:

ԿԱՊԵՏԱՎԻՏ: Ի պատիւ Բոտայի ընդունելու

